կեանքի վայելքի վրայ սատանայական դրոշմ է տեսնում: Այդչափ պրպտողը, այդչափ կեանքի աստիճանական զարգացումը ընդունողը աւելի տարբեր աչքով պէտք է նայէր կեանքին, մանաւանդ որ մէջտեղը կայ եւ իշխանուհու պատմութիւնը:

Եթէ Վանահօր տիպարը համեմատելով Աբեղայի հետ գտնում ենք ոչ այնքան ուժեղ, այդ դիտումով է եղած հեղինակի կողմից, պարզ այն մտադրությամբ որ շեշտած լինի իրական կեանքի տարբերութիւնը վերացականից: Վանահայրը վերջապէս կրօնի ներկայացուցիչ է, իսկ կրօնը ենթակայ է հազար ու մի փոփոխութիւնների: Միեւնոյն միջոցին բազմաթիւ կրօնների ներկայացուցիչներ կան եւ ամէնքն էլ իրէնց դաւանած սկզբունքի գերին են: Ժամանակները կը փոխուին, նրանց հետ պիտի փոխուին եւ կրօնական համոզումները: Կրօնական հաւատալիքների մէջ ոչինչ չկայ կայուն, մինչ սիրոյ պաշտամունքը կեանքի հետ կայ եւ կեանքի հետ էլ պիտի վերջանայ, նրա սկզբունքները անխախտ են ամէն տեղ եւ բոլոր ժամանակներում: Այս հսկայական տարբերութիւնները մենք տեսնում ենք երկու ներկայացուցիչների միջեւ: Մինչ տկար է Վանահայրը, անդին, Աբեղան զօրեղ է իր կամքով, ինքն իր մէջ. արտաքին պայմանները իրեն չեն խանգարում, եւ եթէ մի վայրկեան նա տարւում է կամ շփոթւում, բայց անմիջապէս իր ներքին ձգտումի գերին է, սիրոյ ներբողն է անում, Սիրոյ Աստուածն է պաշտում, որ է Հին աստուածներ, ըստ հեղինակի, եւ գնում է միանալու իր սիրոյ առարկային:

Դէպքերի լուսաբանութիւնը այնքան բարդ է, որ երբեմն երկուութիւն է առաջ գալիս միեւնոյն իրողութեան մէջ: Եւ դա այս տռամի թէ թերութիւնն է, եւ թէ արժանիքը:

Աբեղայի ծով նետուիլը, իրապէս մահը – այլապէս նրա յաղթութիւնն է: Նա հասնում է իր նպատակին: Նա ուզում էր ազատուիլ անբնական կեանքից, ինչպիսին է վանականը. նա բողոքն է այդ կեանքի դէմ, եւ իր բողոքը արտայայտում է այդ ձեւով: